հայ և թուրք բնակչության վրա, իսկ ձմեռանոցներում ապրողները հաճախակի միայն որոշ ծառայություններ էին կատարում կալվածատերերի և իրենց առաջնորդ բեկերի համար։ Այսպես օրինակ՝ Ռուստամ-բեկի ձմեռանոցներում ապրողները պետությանը ոչինչ չէին վճարում և զբաղված էին կալվածատիրոջը պատկանող խոշոր և մանր անասունների հոտերը, նախիրները և ձիերի երամակները արածացնելով և դրա համար նրանից երբեմն ստանում էին նաև դրամական վարձատրություն, հաց և հագուստ։

Այսպիսով, XIX դ. առաջին քառորդում Զանգեզուրի բնակչությունը թե ըստ խտության, թե՛ ըստ ազգային կազմի և թե՛ ըստ կենցաղի և պետական պարտականությունների բաշխման՝ չէր ներկայացնում բոլոր մահալներում միանման միասնություն, ինչպիսի պատկեր որ նա ուներ մինչև XIII դ. սկզբները, երբ այստեղ մշտական բնակություն հաստատեց Ասիայի խորքերից ներս թափանցած թուրք-մոնղոլական տարրը, որը ոչ միայն իր մարդաբանական հատկանիշներով, այլև իր տնտեսական պրիմիտիվ զարգացումով և իր հասարակական-պետական կենսաձևերով և թե իր գաղափարախոսությամբ ու կուլտուրական ցածր մակարդակով չափազանց տարբերվում էր տեղական բնակիչներից։ Թեև մահալական կարգերը մի մնացորդ էին հնուց տեղում ձևավորված ավանդական կարգերի, որոնք ընդհարվեցին նորեկների բերած ցեղապետական իրավահասկացողության հետ, սակայն նրանք այնքան ուժեղ չհանդիսացան, որ օրգանապես իրենց ենթարկեին նաև նորամուտ էթնիկ տարրը։ Աչքի էր ընկնում այն իրողությունը, որ մելիքների իրավասությանն ենթարկվում էր գլխավորապես նստակյաց բնակչությունը, որը բաղկացած էր առավելապես հայ գյուղացիությունից և շատ ավելի սահմանափակ չափով նաև թուրքական տարրի այն փոքրամասնությունից, որը արդեն հաստատ նստել էր գյուղական բնույթ ստացած բնակավայրերում և անցել էր առավելապես հողամշակությանը։ Ինչ վերաբերում էր այդ տարրի մեծագույն մասին, նրա վրա գրեթե չէր տարածվում մահալական մելիքների իրավասությունը և ձմեռանոցների բնակչությունը, անասնապահ և foçlor, ճանաչում էր ավելի իր թուրք կալվածատերերի և իր համայնքի առաջնորդների[14], քան թե մահալական մելիքների իշխանությունը։ Այս հեղինակությունը որոշ չափով շաղկապված էր մելիքական տան հնության հետ։ Կային շատ հին և նրանց կողքին համեմատաբար նոր ծագում ունեցող տներ։ Աճանան-Թուրք մահալի մելիք Ստեփանը նոր էր սկիզբ դնում վարչական տան[15]։ Նա կառավարում էր մելիք Հուսեյին-Ղուլի «տեսչության ներքո», որն ավագ էր և որն անշուշտ իր մելիքությունը վարում էր ժառանգական իրավունքով։ Մահալական մելիքները, ինչպես և առանձին գյուղախմբերինը, իրենց իշխանությունը փոխանցում էին ժառանգներին, թեև յուրաքանչյուր անգամ պահանջվում էր խանի հաստատումը տալաղայով։ Սակայն երևի առանձնապես կարևոր հան-

---

[14] Այսպիսի առաջնորդների դերում էին, բացի Ղասում-բեկի ընտանիքի անդամներից, հարավում՝ Բաղաբյուրտի մահալում Տուշմալ-բեկերը, որոնցից մեկը, Հաջի-Մահմեդը, նստում էր Սոֆալի, մյուսը՝ Մուշմալա-բեկը Սարալլի, երրորդը՝ Հուսեյին-բեկը, Խոջա-Մուսախլի ձմեռանոցում։ Հաջի-Աղալար-բեկի ազդեցությունը հանել էր Մելիք-Սավրազբեկյանների տունը նրանց տոհմական բնից՝ Անգեղակոթից, որտեղ մելիք Սաֆրազը հավաքել էր գավառի մելիքներին 1699 թ. Իսրայել Օրու բերած ծրագիրը քննելու համար. այդ տունը տեղափոխվել էր Ղարաքիլիսա։

[15] Ըստ տեղում պահպանված ավանդության, որը պատմվում է նաև Մելիք-Փարսադանյանների ընտանիքների մեջ։